# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**/2-րդ հանրային լսման/**
**«ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Գեղարքունիքի մարզի Քարաձորի անդեզիտաբազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

Գեղհովիտ բնակավայր «18» նոյեմբերի 2025թ.

Կազմակերպված երկրորդ հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը:
- Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և ՇՄՊ վարչության գլխ. մասնագետ Դ. Ջանգեզուրյանը:
- Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության գլխ. մասնագետ Հ. Հարությունյանը:
- Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հ. Հարությունյանը:
- Գեղհովիտ բնակավայրի վարչական ղեկավար Ա. Խաչատրյանը:
- ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՊԸ-ի տնօրեն Վ. Վարդանյանը, ներկայացուցիչներ Գ. Հովսեփյանը, Մ. Հարությունյանը համայնքի բնակիչներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (03.05.2024թ., այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով՝ 2025թ. նոյեմբերի 18-ին ժամը 11:00-ին Մարտունու համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Գեղարքունիքի մարզի Քարաձորի անդեզիտաբազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ նախատեսվում է իրականացնել Գեղարքունիքի մարզի Քարաձորի անդեզիտաբազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների: Նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Վերոգրյալի հիման վրա՝ Օրենքով և Որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ 2025 թվականի հունվարի 21-ին, ժամը 12:00-ին Մարտունու

համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացել է նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսումը:

Այդ լսման արդյունքում 2025 թվականի փետրվարի 21-ի N 22-Ա որոշմամբ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքի ավագանին «ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Գեղարքունիքի մարզի Քարաձորի անդեզիտաբազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքներ իրականացմանը տրամադրել է իր նախնական համաձայնությունը:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ, ինչպես նաև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, Օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային երկրորդ լսումներ:

Հ. Մեսրոպյանը նշեց, որ երկրորդ հանրային լսման վերաբերյալ ծանուցումը կատարվել է Օրենքի և Որոշման պահանջներին համապատասխան, սահմանված ժամկետներում հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի համարում, հայտարարությունը տեղադրվել է Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում:

Հաջորդիվ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, կապված հայցվող տարածքի հողի նպատակային նշանակության վերաբերյալ: Ըստ կադաստրի կոմիտեի ներկայացված գրության՝ նշված կոորդինատներով տարածքը կադաստրային քարտեզում տեղադրելիս ամբողջությամբ գտնվում է Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքի Գեղհովիտ բնակավայրի՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի սահմաններում:

Հանրային լսման ընթացքում ելույթ ունեցան Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հ. Հարությունյանը, Գեղհովիտ բնակավայրի վարչական ղեկավար Ա. Խաչատրյանը: Միաժամանակ ողջունեցին «ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Գեղարքունիքի մարզի Քարաձորի անդեզիտաբազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքներ իրականացմանը:

Ելույթ ունեցան նաև «ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Գ. Հովսեփյանը, Մ. Հարությունյանը համայնքի բնակիչներ:

Հանրային լսման մասնակիցների կողմից եղան հարցադրումներ: Հարցադրմանը տրվեց սպառիչ պատասխաններ:

Հաջորդեց ընդհանուր բնույթի քննարկում՝ հատկապես Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և ՇՄՊ վարչության գլխ. մասնագետ Դ. Զանգեզուրյանի և Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության գլխ. մասնագետ Հ. Հարությունյանի մասնակցությամբ՝ կապված հայցվող տարածքում գտնվող ձորակի վերաբերյալ:

«ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ. Հովսեփյանը հարցադրմանը պատասխանեց, որ հայցվող տարածքում գտնվող ձորակը բացառապես անջուր է: Ջրի

առկայությունը նկատելի է դառնում միայն ձնահալոցքի և անձրևների ժամանակ, որից հետո հանրային լսման պատասխանատուն արձանագրեց, որ բարձրացված հարցադրումներին տրվեցին սպառիչ պատասխաններ: Հանրային լսման մասնակիցները տվեցին իրենց համաձայնությունը նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրային լսման պատասխանատուն ամփոփեց և փակեց հանրային լսումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան

«ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գևորգ Հովսեփյանը